

Բազմալեզու, 49 տարեկան հասակում, ընդ-
միջատ փակում է իր աչքերը: Նրա կորուս-
տը սգում են Բազմի բոլոր հայերը: Աշու-
ղը նրա գեղեցիկ բարեմամբությունները
գծել է այսպես.

«Քո ազգանունը խառնուրդ է,
Գլխիդ խելքը անտակ ծով է.
Ամեն ազգ էլ քեզ կը գովէ,
Հանգուցեալ Կոստի խառնուրդն»:

Պահպանում է իր աղքատները,
Դու է իր աղքատների տէրը.
Բոլոր հայոց գլխաւորը,
Հանգուցեալ Կոստի խառնուրդն»:

Դիակը տարան ընկերներով,
Կանաչ-կարմիր ծաղիկներով.
Քահանայով, մուգիկայով,
Հանգուցեալ Կոստի խառնուրդն»:

Բայց ահա գիւղի հայ համայնքի կեան-
քը յուզող մի այլ տխուր պատկեր: Նո-
րաչէն գիւղացի Պապի Յարութիւնեանին
թուրքերը խաբում, տանում են եւ ան-
յայտացնում: Այդ մոռյալ դէպքը շատ խո-
րը վիշտ է պատճառում թէ՛ իր հարա-
զատներին եւ թէ՛ գիւղի ժողովրդին: Ա-
շուղն այսպիսի պարզ տողերով նկարա-
գրում է իր ժամանակի այդ յուզիչ դէպ-
քը.

«Աստուած ինքը այսպէս գրած,
Դէ՛հ, ի՛նչ ասեմ, որդի Դաւիթ.
Թուրքերը գողացան տարա՛ն,
Քո հայրն եմ, անունս Պապի,
Որդին հօրը կը տապաւայի.
Բա թուրքն էլ հային կը խափի՞,
Ինձի գողացին թուրքերը»:

Աշուղի կեանքի պատմութեան վշտոտ
եւ տխուր մի էջն է կազմում իր թանկա-
գին դասեր՝ Ասուր, վաղաժամ մահը, որ
գոհ է գնում ծաղիկ հիւանդութեան: Եր-
գիչը խորունկ վշտով համակւած՝ թախ-
ծոտ սրտով ողբում է իր սիրանուն զա-
ւակի մահը.

«Նաշխուն աչքերով կուրացաւ,
Ինն օրումը չորացաւ.
Լոյս աշխարհից գուրկ մնացաւ,
Աւագ Սանթուր, Ասլին մեռաւ»:

9. - Խառն մօտիւններ: Երգիչն աշուղա-
կան գրականութեան աւանդական սովոր-
ութեան հաւատարիմ մնալով՝ յօրինել է
Այր-բենի կարգով մի անպաճոյճ ոտա-
նաւոր, որ բարոյական, խրատական եւ
լիմաստասիրական բնոյթ ունի: Նա գըտ-
նում է, որ «Այրը» Աստուած է, որ մեզ
պահում է, «Բն» Բանն է, «Գն» գինին է,
որ մարդկանց համար բաժակ է, «Գն»
գաշտն է: Աշուղն ամէն մի տառի կատա-
րած գերն արձանագրել է տարբեր ե-
րանգաւորումով.

«Ժէն» ժառանգն է, մարդիս համար պը-
տուղ է,
Հայրը մեռնի, որդուն տեղը կը թողէ.
Բարի որդին ծնողներին յիշող է,
Բարի որդուն բարի օրհնեմ, ժողովուրդը:
«Ծան» շատն է, ամենայն մարդ կսիրի,
Աշխատողը կ'աշխատի, կը բերի.
Ուսումաւորը անուսումին կների,
Ես պէտք է ներող լինեմ, ժողովուրդը»:

Աշուղը կեանքի էութեան մասին խորը
փորձառութիւն ունի եւ գիտէ, որ այս
անցաւոր աշխարհում մնալուն է միայն
բարի գործը, իսկ իր մահից յետոյ իր ա-
նունն ու յիշատակը ժողովրդի մէջ վառ
են պահելու իր բանաստեղծութիւնները,
որոնք մնալու են, որպէս մի գեղեցիկ
յուշարձան եւ զարգարելու են գրասէրնե-
րէ, երգասէրների գրադարանները: Այդ
գիտակցութեամբ էլ նա իր ոտանաւորնե-
րը տպագրութեան է տալիս: Եւ որպէսզի
իր գրքում սխալներ չվրիպեն, գրաշար
Սամսոն Այվազեանից խնդրում է իր գը-
րածները լաւ եւ ուշադիր չարել.

«Գրիչս առել եմ ձեռքս,
Քեզ գրում եմ, բարի Սամսոն.
Հիմի դու ես աջ ձեռս,
Գրերս լաւ չարիր, Սամսոն»:

Խնդրում եմ քեզ՝ սխալ չանես,
Գործը իւր կարգովը տանես.
Սրտիս ուղած բանը անես,
Կորած գիրս ճարի, Սամսոն»:

Աշուղական արւեստի մի գեղեցիկ ըս-
տեղծագործութիւն է երգչի յօրինած
«Խելօք երեխայի երգ» խորագրով ոտա-
նաւորը, որից երեւում է, որ նա սիրում
է եւ գնահատում այն բոլոր մանուկնե-
րին, որոնք ուսումնասէր են, աշխատա-
սէր, ուրախ սրտով ուսումնարան են յա-
ճախում, իրենց դասերը լաւ են սովոր-
ում, միաժամանակ յարգում են եւ պատ-
ւում ո՛չ միայն իրենց ծնողներին եւ ու-
սուցիչներին, այլ եւ բոլոր մեծերին, իսկ
իրենց աշխատասիրութեամբ ու յառաջա-
դիմութեամբ ուրախացնում եւ պատիւ
են բերում իրենց ծնողներին: Աշուղը գի-
տէ, որ կարգացող երեխան երբ մեծա-
նայ, «վարովի հոտաւէտ վարդ ա, ով որ
տեսնի, հոտ կը քաշէ»: Ահա աշուղի կար-
ծիքը գրասէր փոքրիկների համար.

«Խելօք որդին գիր կը սիրի,
Իրեն դասը միտը կը բերի.
Վարժապետին չի չարչարի,
Ծնողները կ'ասեն ջանայ:
Խելօք որդին խաղ չի անէ,
Դասը կարգով կը տանէ.
Խելօք որդին եթէ կարգայ,
Որ մեծանայ տղամարդ ա.
Վարովի հոտաւէտ վարդ ա,
Հոտ կը քաշէ, ով որ տեսնայ:
Խելօք որդին տե՛ս, շատ լաւ ա,
Ման չի գալ նա եաւա, եաւա.
Փողոցումը չի անիլ դաւա,
Ծնողներին քաղցր համ ա»:

Աշուղը խորապէս գնահատում է նաեւ
այն «երախտագէտ որդուն», որը սրտանց
սիրում է իր ծնողներին, սիրով է կատա-
րում իր բարոյական պարտականութիւն-
ները եւ նրանց երջանկութեան համար
ղոհում է իր լաւագոյնը: Նման զաւակի
կեանքն աշուղն օրհնեցողում է:

«Քեզ պէս են ծնողի սիրող,
Որտեղ կը լինի, որդի՛ Դաւիթ»:

Ծնող պահող ու պահպանող
էլ չի լինիլ, որդի՛ Դաւիթ»:

Տուն ես չինել մօրդ համար,
Միշտ ուղարկում ես դու՛մար-գու՛մար.
Քո օրերդ լինի դալար,
Դալար ապրես, որդի՛ Դաւիթ»:

Գ. - ՎԵՐՋԱՐԱՆ

Հայ աշուղական բանաստեղծութեան
ինքնատիպ եւ պայծառ դէմքերից մէկն է
աշուղ Առաքել Յարութիւնեանը, որ 19րդ
դարի 60ական թւականներից հրապարակ
գալով գիւղական միջավայրում, իր սաղի
լարերի վրայ հնչեցրել է աշուղական երգն
ու երաժշտութիւնը, միաժամանակ գծել
է իր ապրած ժամանակի ուշադրաւ եւ
յուզիչ երեւոյթներն ու անցքերը: Նկարել
է նաեւ պատմաշրջանի մի շարք կերպար-
ներ իր էական առանձնայատկութիւնները:

Աշուղն իր գոլանական երգերով ձեզ
տանում է գլխաւորապէս Սիւնեաց գաւա-
ռի Ղափանի շրջանի հայաբնակ եւ թրքա-
բնակ գիւղական միջավայրը, ինչպէս նա-
եւ Բազու, Գորիս եւ այլ քաղաքներ, որ-
տեղ նա փայլել է իր աշուղական գործու-
նէութեամբ եւ իր սաղի վարպետ նազա-
ծութեամբ, իր քաղցր ու գիւրեկան ձայ-
նով եւ գոլանական երգարւեստով ան-
շուղի չի լինել եւ յարգելի թէ՛ հայ եւ թէ՛
թիւրք ժողովրդից:

Հայ աշուղական գրականութեան նա ա-
ւանդ է թողել պարզ, անպաճոյճ, բայց
զուսպեղ եւ ինքնատիպ ոտանաւորներ,
որոնք իրենց քնարական եւ հասարակա-
կան բովանդակութեամբ վկայում են, որ
աշուղն ապրել է գլխաւորապէս գեղջուկ
ժողովրդի ցաւերով եւ արձանագրել է
նրանց բաղմբերանգ կեանքի ուրախ եւ տը-
նաւոր լինելը: Առհասարակ, նա վառ ու
խուր էջերը: Առհասարակ, նա վառ ու
կենդանի դոյներով նկարել է իր ժամա-
կանի իրականութեան եւ գլխաւորապէս
չինական հայ ժողովրդի ուշադրաւ, հա-
րազատ եւ յուզիչ դէպքերն ու երեւոյթ-
ները, քննադատել է եւ բողոքել նաեւ ժա-
մանակի տիրող մռայլ ու տխուր պայ-
մանակի տիրող մռայլ ու տխուր պայ-

